5-6

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Փոքրիկ Գագիկին անվանակոչել են պապիկի պատվին։ Դա նշանակում է, որ Գագիկը և նրա պապիկը՝

Ա) նույնանուն են
Բ) անվանակից են
Գ) անվանակոչիկ են
Դ) համանուն են
Ե) անվանարկու են

2. Կետադրական ո՞ր նշանով կարող է սկսվել նախադասությունը։

Ա) միջակետ
Բ) պարույկ
Գ) ենթամնա
Դ) չակերտ
Ե) ապաթարց

3. Առած-ասացվածքներում ո՞ր կենդանին է որպես ապացույց իր ագին ներկայացնում, և նրան նույնիսկ շատ փորձառու լինելն էլ ծուղակից չի փրկում։

Ա) արջ
Բ) աղվես
Գ) գայլ
Դ) նապաստակ
Ե) փորսուղ

4. Պատասխանի տարբերակներից ո՞րը նոր շունչ կտա ***ավազ, երկ, պար, վազ, ստել*** բառերին։

Ա) մեն
Բ) չա
Գ) նու
Դ) շա
Ե) գիմ

Ուրախությամբ միակ «ՄԵՂՈՒ»-ի հանձնությամբ

5. Երբ Անին ասաց, թե ինչ բառերի է հանդիպել իր սիրելի ոլորտն ուսումնասիրելիս, Վահեն հասկացավ, թե ինչն է նրա հետաքրքրության առարկան: Ո՞րն է այդ ոլորտը, եթե Անիի նշած բառերն են՝ ***թիակ, հող, ներբան, անրակ, սրունք***:

Ա) բժշկություն
Բ) նավագնացություն
Գ) կոշկակարություն
Դ) երկրաչափություն
Ե) դերձակություն

6. Ի՞նչ կամ ո՞վ է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

մարդ, կրակ, վտառ, բաժակ, ուշիմ, գարուն, կտոր

Ա) տարվա եղանակ
Բ) հայոց արքա
Գ) տոն
Դ) քաղաք
Ե) հայ բանաստեղծ

7. ***Տուղտ, գաղթ, խորթ, ամուր, հորդ*** բառերը, բացի մեկից, ենթարկվում են որոշակի օրինաչափության: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա) տուղտ
Բ) խորթ
Գ) հորդ
Դ) ծունկ
Ե) գաղթ

8. Բերված առարկաներից ո՞րը կմիանա ***-ուկ*** ածանցին ու «շունչ կստանա»:

Ա) շերեփ
Բ) գդալ
Գ) դանակ
Դ) պատառաքաղ
Ե) գրտնակ

9. Մեղվաշենում լինում են այսպիսի միացումներ: Պատասխանի տարբերակներից որի՞ն է փոխարինում մեղվիկը:

ՑԻՆԿ + ՊՂԻՆՁ = ԱՐՈՒՅՐ

ՋՐԱԾԻՆ + ԹԹՎԱԾԻՆ = ՋՈՒՐ

ՄԱԾՈՒՆ + ՋՈՒՐ = ԹԱՆ

ԹԱՆ + ՁԱՎԱՐ = ՍՊԱՍ

ԼՈՒՅՍ + ՋՈՒՐ =

Ա) ԾՈՎ
Բ) ԾԻԱԾԱՆ
Գ) ՄԵՂԵԴԻ
Դ) ԼՈՒՍԻՆ
Ե) ՑՆՑՈՒՂ

10. Բառաշարքի բառերից քանի՞սն են ***յու*** երկհնչյունի ընկերները.

կոր*ն, դաշ*ն, մշկընկ*զ, հնչ*ն, խար*կ, մերկասառ*ց, ոսկեձ*լ, աշխ*ժ, Բ*րական, սառնար*ն, պար*ր, թեփալ*ր

Ա) 4
Բ) 5
Գ) 6
Դ) 8
Ե) 10

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Բերված զույգերից որո՞ւմ բառերն ունեն տարբեր քանակի հնչյուններ:

Ա) նրա – մենք
Բ) ձեռք – ոտք
Գ) երեխա – մանչուկ
Դ) տերև – ճյուղ
Ե) տետր – գրիչ

Հանրակրթության միայն «Այբ»-ի համաձայնությամբ

12. Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում բերված հատվածի բովանդակությանը։

Քանդակագործ Երվանդ Քոչարին առաջարկեցին Սասունցի Դավթի քանդակը ստեղծել 1939 թվականին՝ Էպոսի 1000-ամյակից մեկուկես ամիս առաջ։ Հսկա արձան ստեղծելն այդքան կարճ ժամանակահատվածում անիրական էր թվում, սակայն Քոչարն արձանի գիպսե տարբերակը կերտեց ընդամենը 18 օրում, իսկ 1941 թվականի ամռանը ձերբակալվեց։ Նրան մեղադրեցին, որ իբր Սասունցի Դավթի թուրն ուղղված է դեպի Թուրքիա։ Քոչարը բանտում անցկացրեց երկու տարի։

Ա) Էպոսի հազարամյակը նշվել է 1941 թվականին։
Բ) Քոչարն արձանի պղնձե տարբերակը կերտեց ընդամենը 18 օրում։
Գ) Քանդակագործը բանտում անցկացրեց երկու տարի։
Դ) Քոչարը ձերբակալվեց արձանը ժամանակին չհասցնելու պատճառով։
Ե) Սասունցի Դավթի դեմքն ուղղված էր Թուրքիայի կողմը։

13. Պատասխանի տարբերակներից ո՞րն է նախադասության մեջ գրվում փոքրատառով՝ բացի նախադասության սկզբից։

Ա) Գևորգ
Բ) Հայաստանցի
Գ) Հակոբյան
Դ) Գորիս
Ե) Հայաստան

14. Պատասխանի տարբերակներում բերված նախադասություններում բաց են թողնված թվականները։ Ո՞ր տարբերակն է տարբերվում մյուսներից։

Ա) Երեխաների արարքից զայրացած պահակը … գույն փոխեց։
Բ) Տունը … քայլի վրա էր, բայց Աշոտը միշտ տաքսի էր կանչում։
Գ) Հարսանյաց տոնակատարությունը տևեց … օր, … գիշեր։
Դ) Մեծահարուստն իր գանձերը … փակի տակ էր պահում։
Ե) Նորապսակներին մաղթեցին … որդով սեղան նստել։

15. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը։

երգարվեստ – ***= ստվեր***

Ա) երկնային լուսատու
Բ) գիշատիչ կենդանի
Գ) բույսի մաս
Դ) երկար մազեր
Ե) զինվորական կոչում

Վերարտադրումը միայն «ԱՅԲ»-ի համաձայնությամբ

***16.** Ո՞ր բառի հոմանիշը չկա Վահագն Դավթյանի բանաստեղծության բերված քառատողում։

Հայաստա՛ն, իմ հող, իմ մամուռ, իմ սեզ,
Ծերպերից կախված իմ կապույտ թախիծ,
Քարերից քամվող արտասուք իմ հեզ,
Քարերում նիրհող կրակե ծաղիկ։

Ա) ճեղք
Բ) տխրություն
Գ) կսկիծ
Դ) լաջվարդ
Ե) խոնարհ

**Այս առաջադրանքում չկա ճիշտ պատասխանի տարբերակ։*

17. Չինական մարտարվեստում կռիվը հիմարների համար է, հաղթանակը՝ խելացիների։ Իսկ ի՞նչն է իմաստունների համար։ Պատասխանը գաղտնագրված է նկարելուկով։

Ա) մթություն
Բ) խելք
Գ) լռություն
Դ) լույս
Ե) խաղաղություն

18. Ո՞ր տարբերակի բառերի պոչից կկպչեն ***գ, կ, ք*** տառերը, որ վեց նոր բառ ստացվեն։

Ա) վար, գիր
Բ) վեր, կիր
Գ) շոր, լոր
Դ) հար, կար
Ե) շող, նոր

19. Նախադասության մեջ քանի՞ բառում է սխալ թույլ տվել Անգետիկը.

Արագնթաց գնացքը սրնթաց սրլանում էր մթընկա անտարների ու անդընդախոր ձորերի միչով:

Ա) 2 Բ) 3 Գ) 7 Դ) 10 Ե) 6

20. Երկու բառ որոշակի օրինաչափությամբ միահյուսվել են։ Ո՞ր բառազույգն է դա։

մուակնրուաշրաեկվ

Ա) մուշտակ – մանրակերտ
Բ) աշակերտ – վարկանիշ
Գ) աշտարակ – երկարում
Դ) արմունկ – տասներկու
Ե) մանուշակ – վերարկու

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ո՞ր բառից են «քամվել» տրված պատկերները։

Ա) քարավան
Բ) վանական
Գ) վրանաբնակ
Դ) նավաբեկյալ
Ե) կրաքար

22. Եթե բոլոր ամսանունները դասավորենք այբբենական կարգով, ապա ութերորդ ամիս օգոստոսն այդ ցանկում կլինի վերջինը՝ տասներկուերորդը։ Ըստ հերթականության ո՞րերորդ ամիսը այբբենական այդ ցուցակում կզբաղեցնի առաջին հորիզոնականը։

Ա) առաջինը
Բ) երկրորդը
Գ) երրորդը
Դ) չորրորդը
Ե) հինգերորդը

Կրթահամալիրային «Այբ»-ի հանձնաժողով

23. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել նկարելուկով։

Ա) Վարդանը վեց վարդ տվեց։
Բ) Վարդակը ինը վարդ ուներ։
Գ) Վարդակը տվեց Վարդիթերը։
Դ) Վարդակը տվեց Ալվարդը։
Ե) Վարդակը տվեցին Ալվարդին։

24. Ո՞ր բառն է որոշակի օրինաչափությամբ թաքնվել ***քառակուսի, մաղադանոս, խմբաքանակ, եկեղեցի*** բառաշարքում։

Ա) քանդակ
Բ) քաղաքացի
Գ) աղաման
Դ) աղաց
Ե) կանադացի

25. Գումարում և հանում մաթեմատիկական գործողությունների միջոցով պարզի՛ր՝ որ դարձվածքն է ծածկագրված։

10-3, 100+400, 80-60, 5000-1000, 9-4, 60+30, 6-2, 600-200, 2+3, 70-40

Ա) Էշը ուտել, պոչին խռովել

Բ) Էշի ականջում քնել

Գ) Էշի տեղ դնել

Դ) Էշ կտրել

Ե) Էշին քեռի ասել

26. Ամենաշատը քանի՞ տարբեր կենդանի է հնարամտորեն թաքնվել (ձախից աջ) բերված նախադասության մեջ։

Զանգակատուն տանող խորդուբորդ ճանապարհով երիտասարդները աղմուկ-աղաղակով, բայց ծուլորեն մոտեցան եզերազարդ աղբյուրին։

Ա) 5
Բ) 6
Գ) 7
Դ) 8
Ե) 9

Վերնագրատպումը միայն «ԶԴԲ»-ի համաձայնությամբ

27. «Կոտորակագիր» կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մի կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ: Օրինակ բերված է նկար 1-ում: Ի՞նչ առած է գաղտնագրվել նկար 2-ի կոտորակագրում:

Նկար 1



Նկար 2



Ա) Ուշ արի, շուտ գնա:
Բ) Շուտ արի, շուտ գնա:
Գ) Ուշ արի, ուշ գնա:
Դ) Շուտ արի, ուշ գնա:
Ե) Ուշ արի, նուշ արի:

28. Բառաշարքերը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞ր տարբերակի բառը կարող է համալրել տրված բառաշարքը:

վար-վարկ-վարակ,
բան-բանկ-բանակ

Ա) ցան
Բ) բար
Գ) կաղ
Դ) ճար
Ե) քան

29. Տառազույգերը շարված են որոշակի հստակ օրինաչափությամբ: Ի՞նչ տառազույգ է թաքցրել մեղվիկը.

թի, թի, թի, թի, աթ, աթ,

Ա) աթ
Բ) թի
Գ) կի
Դ) ակ
Ե) իկ

Վարիանտաղարակը միայն «Այբ»-ի հանձնարարությամբ

30. «Հայոց լեզվի հանգաբառարանում» բառերը դասավորված են հետադարձ այբբենական կարգով, այսինքն՝ սկզբում այն բառերն են, որոնք ավարտվում են ***ա*** տառով, այնուհետև՝ ***բ*** տառով և այլն։ Ի՞նչ հերթականությամբ են այդ բառարանում դասավորված ***կորիզ, մեքենա, ծխնելույզ, բյուրեղ, կաթսա*** բառերը։

Ա) մեքենա, կաթսա, ծխնելույզ, կորիզ, բյուրեղ
Բ) բյուրեղ, ծխնելույզ, կաթսա, կորիզ, մեքենա
Գ) մեքենա, կաթսա, կորիզ, ծխնելույզ, բյուրեղ
Դ) կաթսա, մեքենա, ծխնելույզ, կորիզ, բյուրեղ
Ե) ծխնելույզ, բյուրեղ, կորիզ, կաթսա, մեքենա

վերահրատարակումը միայն «ԱՄԲ»-ի համաձայնությամբ